

## ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՕՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԵՋ

Մարտ 28ին, 2010, Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցին տօնախմբեց Ծաղկազարդի տօնը՝ Յիսուս Քրիստոսի Երուսաղէմ յաղթական մուտքի յիշատակը:

Տօնին առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ առաւօտեան կատարուեցաւ հանդիսաւոր ժամերգութիւն, որու աւարտին Մայր Տաճարի առջեւ, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարուեցաւ անդաստանի արարողութիւն, ապա օրհնուեցան ուռենիի ճիւղեր եւ բաժնուեցան ներկայ ժողովուրդին:

Արարողութենէն ետք Վեհափառ Հայրապետը կատարեց մանուկներու օրհնութեան յատուկ կարգ, որուն մասնակցեցան Հայորդեաց տուններու սաները եւ Հայրենիքի տարբեր կողմերէն Մայր Աթոռ ժամանած մանուկներ:

Ապա Մայր Տաճարին մէջ տօնի առիթով մատուցուեցաւ Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեորգեան Հոգեւոր ճեմարանի Տեսուչ՝ Գերշ. Տ. Սահակ Եպս. Մաշալեան: Սրբազան Հայրը իր քարոզին մէջ անդրադարձաւ Ծաղկազարդի Տօնի խորհուրդին եւ կոչ ուղղեց հաւատացեալներուն՝ ունենալ նոյն անմիջական ու ջինջ հաւատքը, որ ցուցաբերեցին մանուկները Երուսաղէմ Քրիստոսի յաղթական մուտքի ժամանակ, որոնք Տէր Յիսուսի մէջ անմիջապէս տեսան Փրկիչը եւ փառաբանեցին Քրիստոսը:

Սուրբ Պատարագի աւարտին Նորին Սրբութիւնը շնորհաւորեց եւ իր օրհնութիւնը բաշխեց փոքրիկներուն: Այս առիթով մանուկներուն յանձնուեցան նուէրներ եւ մանկական հոգեւոր գրականութիւն:

### ԻՐԱԿԱՆԱՑԱՒ «ԾԱՂԿԱԶԱՐԴԸ ԿԸ ՏՕՆԵՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնէական Դաստիարակութեան Կեդրոնը՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Հայաստանեան միջ-եկեղեցական բարեգործական Կլոր սեղանի հիմնադրամի հետ համատեղ եւ «Եկեղեցին Եկեղեցւոյ Համար» կազմակերպութեան աջակցութեամբ, Ծաղկազարդի տօնական օրերուն իրականացուց «Ծաղկազարդը կը Տօնեն Մանուկները» ծրագիրը:

Ծրագիրը կեանքի կոչուեցաւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեան Թեմերու եւ տեղական ինքնակառավարման մարմիններու հետ համագործակցաբար, որուն մասնակցեցան Երեւանի եւ մարզերու (Արարատ, Արմաւիր, Արագածոտն, Կոտայք, Շիրակ, Գեղարքունիք, Վայոց Ձոր, Լոռի) շուրջ 350 մանկապարտէզներու 14,000 սաներ:

Ծրագրի շրջանակներուն մէջ Մարտ 25-28, մանկապարտէզներու աւագ խումբերու երախաները դաստիարակներու եւ ծնողներու ուղեկցութեամբ, այցելեցին Եկեղեցիներ, ուր Հոգեւոր Հովիւները մանուկներուն ներկայացուցին Ծաղկազարդի խորհուրդը, ապա կատարեցին մանուկներու օրհնութեան կարգը: Մասնակից մանկապարտէզներուն տրուեցան օրուան խորհուրդը արտայայտող ցուցապաստառներ, իսկ մանուկներուն՝ աղօթաթերթիկներ: